

Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջան

Համալսարան
ընդունվելու պահանջները
միջանկյալ դպրոցի ծնողների և
աշակերտների համար

Դեյվիդ Ստար Ջորդան միջանկյալ դպրոց
Լյուիթեր Բրբենք միջանկյալ դպրոց
Ջոն Սյուիթ միջանկյալ դպրոց



Միջնակարգ դպրոցն ավարտելու և 4 տարով համալսարան ընդունվելու պահանջները

ԲԳՄՇ-ի դպրոցները ավարտելու պահանջները	Կալիֆոռնիայի պետական համալսարան (CSU) ամենաքիչ “ա-է” պահանջները	Կալիֆոռնիայի համալսարան (UC) ամենաքիչ “ա-է” պահանջները
Հասարակագիտություն Աշխարհի պատմություն կամ Եվրոպայի պատմություն (10 միավոր) ԱՄՆ-ի պատմություն (10 միավոր) պետություն (5 միավոր) Էկոնոմիկա (5 միավոր)	ա. Սոց. գիտություն (2 տարի) աշխարհի պատմություն ԱՄՆ-ի պատմություն (Ամերիկյան պատմության ½ տարվա դասը կարող է փոխարինվել Ամերիկյան պետության դասով)	ա. Հասարակագիտություն (2 տարի) Աշխարհի պատմություն Եվրոպայի պատմություն (Ամերիկյան պատմության ½ տարվա դասը կարող է փոխարինվել Ամերիկյան պետության դասով)
Անգլերեն լեզու Անգլերեն 9 (10 միավոր) Անգլերեն 10 (10 միավոր) Անգլերեն 11 (10 միավոր) Անգլերեն 12 (10 միավոր)	բ. Անգլերեն լեզու (4 տարի) (համալսարանի նախապատրաստական դաս)	բ. Անգլերեն լեզու (4 տարի) (համալսարանի նախապատրաստական դաս)
Մաթեմատիկա (20 միավոր) Աշակերտները պետք է դրական գնահատական ստանան հանրահաշիվ I առարկայից և ստանան 20 միավոր	գ. մաթեմատիկա (3 տարի) հանրահաշիվ I երկրաչափություն հանրահաշիվ II	գ. մաթեմատիկա (3 տարի) (խորհուրդ է տրվում 4 տարի) հանրահաշիվ I երկրաչափություն հանրահաշիվ II
Գիտություն (20 միավոր) Ֆիզիկական գիտություն Կենսաբանություն	դ. Լաբարատոր գիտություն (2 տարի) ֆիզիկական գիտություն կենսաբանական գիտություն	դ. Լաբարատոր գիտություն (2 տարի) (խորհուրդ է տրվում 3 տարի) Պահանջվում է այս ոլորտի գոնե 2 դաս. Կենսաբանություն, քիմիա և ֆիզիկա
Տեսական արվեստ (10 միավոր) (այս առարկան չի պահանջվում, եթե 3 տարի նույն օտար լեզվի դասն է անցել) կերպարվեստ (10 միավոր)	ե. Անգլերեն լեզվից բացի մեկ այլ լեզու (2 տարի)	ե. Անգլերեն լեզվից բացի մեկ այլ լեզու (2 տարի) (խորհուրդ է տրվում 3 տարի)
Ֆիզկուլտուրա (20 միավոր) առողջություն/մասնագիտություն (10 միավոր)	զ. Տեսողական կամ կատարողական արվեստ (1 տարի) Մեկ տարի տևողությամբ պարի, դրամայի /թատրոնի, երաժշտության կամ տեսողական արվեստի դաս	զ. Տեսողական կամ կատարողական արվեստ (1 տարի) Մեկ տարի տևողությամբ պարի, դրամայի /թատրոնի, երաժշտության կամ տեսողական արվեստի դաս
Ընտրովի դասեր (70 միավոր)	Է. Համալսարանի նախապատրաստական ընտրովի դաս (1 տարի) լրացուցիչ մեկ տարվա դաս վերը նշված դասերից կամ էլ այլ ընդունելի ընտրովի դաս	Է. Համալսարանի նախապատրաստական ընտրովի դաս (1 տարի) լրացուցիչ մեկ տարվա դաս վերը նշված դասերից կամ էլ այլ ընդունելի ընտրովի դաս

<p>230 միավոր</p> <p>Շառայողական աշխատանքի 10 ժամ</p>	<p>SAT կամ ACT քննությունները պետք է հանձնել մինչև ավարտական տարվա դեկտեմբեր ամիսը</p> <p>“D” գնահատականը ընդունելի չէ համալսարան ընդունվելու համար</p>	<p>SAT կամ ACT քննությունները պետք է հանձնել մինչև ավարտական տարվա դեկտեմբեր ամիսը</p> <p>“D” գնահատականը ընդունելի չէ համալսարան ընդունվելու համար</p> <p>Առանձին առարկաների քննություն տալու կարիք չկա և աշակերտները պետք է ավարտեն «ա-է» 15 պահանջներից 11-ը մինչև ուսման նախավերջին տարվա վերջը</p>
---	---	---

Միջնակարգ դպրոցը ավարտելու համար պահանջվող դասերը

Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջանի դպրոցները 230 միավոր են պահանջում միջնակարգ դպրոցը ավարտելու համար, որոնցից մի քանի դասեր պարտադիր են բոլոր աշակերտների համար, իսկ մի մասն էլ ընտրովի են՝ ընտրված աշակերտի կողմից և կախված են դասերի առկայության պարագայից:

Առարկա		դասեր
անգլերեն լեզու	40	Անգլերեն լեզու 9, Անգլերեն լեզու 10, Անգլերեն լեզու 11, Անգլերեն լեզու 12
մաթեմատիկա	20	1 տարի տևողությամբ, ցանկացած 2 դաս, որի նախապահանջը աշակերտը լրացրել է: 9-րդ և 10-րդ դասարանների բոլոր աշակերտները պետք է մաթեմատիկայի դաս վերցնեն: Բոլոր աշակերտները պետք է դրական գնահատական ստանան հանրահաշիվ I կամ դրան փոխարինող առարկայից ավարտական ատեստատ ստանալու համար:
գիտություն	20	Պահանջվում է ֆիզիկական գիտության մեկ տարվա դաս (ֆիզիկական գիտություն, երկրաբանություն, քիմիա կամ ֆիզիկա): Պահանջվում է իրական գիտության մեկ տարվա դաս (կենսաբանություն, իրական գիտություն, անատոմիա/ֆիզիոլոգիա):
Առողջություն/ մասնագիտություն	10	Պահանջվում է բոլոր 9 ^{րդ} դասարանցիների կողմից (1 տարի)
հասարակագիտություն	10	10 ^{րդ} դասարան աշխարհի պատմություն (1 տարի)
	10	11-րդ դասարան ԱՄՆ-ի պատմություն (1 տարի)
	5	Էկոնոմիկա (1 կիսամյակ) կամ Էկոնոմիկայի և ֆինանսների աշխարհ (1 կիսամյակ)
	5	պետություն – ամերիկյան պետության դաս (1 կիսամյակ)
ֆիզկուլտուրա	20	Ցանկացած 2, մեկ տարի տևողությամբ կամ 4 մեկ կիսամյակի տևողությամբ դասեր, ներառյալ սպորտային դասերը: 9-րդ և 10-րդ դասարանի աշակերտները պետք է վերցնեն ֆիզկուլտուրայի դասեր: SB 78 օրենքի համաձայն, 2007 թվի հուլիսի 1-ից սկսած, բոլոր աշակերտները պետք է անցնեն ֆիտնեսի քննությունը 9-րդ և 10-րդ դասարանում, որ ստիպված չլինեն ֆիզկուլտուրայի դաս վերցնել 11-րդ և 12-րդ դասարաններում: Եթե այս պահանջին աշակերտը չի բավարարում, ապա նա պետք է ֆիզկուլտուրայի դաս վերցնի 11-րդ և 12-րդ դասարանում և հանձնի ֆիտնեսի քննությունը մինչև դրական գնահատական ստանալ: (E.C. 51241)

կերպարվեստ	10	Մեկ տարի տևողության ցանկացած դաս
գործնական արվեստ /մասնագիտություն	10	Մեկ տարվա տևողությամբ կամ 2 մեկ կիսամյակով ցանկացած դաս, ROP դասը ներառյալ
ընտրովի դասեր	70	Ցանկացած դաս, բացի այն դասերից, որոնք որ պահանջվում են դպրոցը ավարտելու համար:
ընդհանուր միավորներ	230	
		Բացի պահանջվող միավորներից. Ծառայողական աշխատանք – 10 ժամ Կալիֆոռնիայի միջնակարգ դպրոցի ավարտական քննությանն հանձնումը դրական գնահատականով

ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻՑ ՀԵՏՈ ՈՒՍՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միջնակարգ դպրոցում ստացած հաջողությունները գրավական են հանդիսանում համալսարանում հաջողությունների հասնելու համար: Հաջողության հասնելու համար աշակերտը պետք է ամուր կրթական հիմքեր ձեռք բերի: Խորհուրդ է տրվում աշակերտներին հետաքրքրվելու Honors և Advanced Placement դասերով և արձանագրվելու անգլերեն լեզվի, մաթեմատիկայի, գիտության, օտար լեզվի և հասարակագիտության բազմաթիվ դասերի: Աշակերտը պետք է արձանագրվի 9-րդ էջի վրայի դասերին և մտածի 4 տարով համալսարան ընդունվելու մասին: Խորհուրդ ենք տալիս աշակերտներին հանձնելու PSAT, SAT և ACT քննությունները և ներկա գտնվելու համալսարանների տեղեկատու ժողովներին դպրոցի նախավերջին տարվա ընթացքում:

Քոլեջի ընդունելության մասին մտածելիս աշակերտները պետք է հաշվի առնեն իրենց բոլոր հնարավորությունները: Կան բազմաթիվ անկախ քոլեջներ և մասնագիտական տեխնիկական դպրոցներ, ինչպես նաև Կալիֆոռնիայի բարձրագույն ուսումնական հաստատությունների համակարգը: Կալիֆոռնիայի նահանգում գոյություն ունեն 3 տարբեր համալսարանների համակարգեր: Յուրաքանչյուր համակարգ ունի ընդունելության իր պահանջները: Մասնավոր կամ նահանգից դուրս գտնվող համալսարաններն ընդունվելու համար պետք է օգտվել դպրոցի Մասնագիտական Կենտրոնի տեղեկատու գրքերից: Միջնակարգ դպրոցի նախավերջին տարում պետք է խորհրդակցել դպրոցի խորհրդատուների հետ ընդունելության պրոցեսի վերաբերյալ:

Անկախ քոլեջներ

Հարյուրավոր անկախ քոլեջներ և համալսարաններ կան մեր երկրում, որոնք իրենց լայն բնութագրով գրավում են աշակերտներին: Քանի որ ուսման վարձը վճարվում է աշակերտի կողմից, և ոչ պետական տուրքերի հաշվին, այն բարձր է լինում պետական համալսարանների գնից: Ֆինանսական օգնությունը հաճախ հնարավոր է ստանալ կարիքի դեպքում:

Որոշ անկախ քոլեջներ ընդունվելը մրցակցային է, իսկ մյուս մասը ընդունում է ամենալավ սովորող աշակերտներին: Ընդունելության պահանջները բավարարելուց բացի, որոնց մեջ են մտնում անցած դասերը, գնահատականները, քննությունների արդյունքները, անկախ քոլեջները հաճախ պահանջում են աշակերտներից հովանավորության նամակներ և մասնակցել հարցազրույցի: Որոշ աշակերտներ կարող են ընդունվել նույն համալսարանի մի քանի տարբեր քաղաքներում գտնվող համալսարանները:

Այս հաստատությունները տարբեր չափի են, ունեն կրթական տարբեր նպատակներ

և թեքում: Որոշ քոլեջներ փոքր են և ավելի անհատականացված են աշակերտների համար, իսկ մի քանիսը ունեն յուրահատուկ հատկություններ կամ կրոնական թեքում: Կալիֆոռնիայի նահանգում մոտավորապես 70 մասնավոր քոլեջներ կան, որոնք հրամցնում են մոտ 125 հնարավոր մասնագիտություններ: Այս քոլեջների ընդունելության պահանջների հետ կարելի է ծանոթանալ դպրոցի մասնագիտական կենտրոնիում կամ քոլեջից:

Մասնագիտական տեխնիկական դպրոցներ

Այն աշակերտները, որոնց հետաքրքրություններն ու տաղանդը պտտվում է դպրոցի վերանորոգման արտադրամասում, լաբարատորիայում կամ աշխատանքային գործունեության ոլորտում կարող են օգտվել կարճ ժամանակով, բարձր որակավորում ունեցող դասերից: Այդպիսի դասեր հնարավոր է ստանալ Շրջանային Աշխատանքային Ծրագրի (ROP), համայնքային քոլեջների, գույքային դպրոցների և հիվանդանոցային դպրոցների միջոցով: Աշակերտները պետք է խոսեն խորհրդատուների և ուսուցիչների հետ իրենց հետաքրքրությունների վերաբերյալ և տեսնեն, թե ինչ ծրագրեր կան իրենց համար:

Կալիֆոռնիայի Համայնքային Քոլեջ

Կալիֆոռնիայի նահանգում կան 105 համայնքային քոլեջներ, որտեղ աշակերտները կարող են վերջացնել համալսարանի ուսման առաջին 2 տարին: Այս քոլեջների դասերի տևողությունը հասնում է մեկ կիսամյակից մինչև 2 տարվա, որոնք պատրաստում են ուսանողներին այնպիսի աշխատանքի անցնելու, որոնք չեն պահանջում համալսարանի աստիճան:

ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

- Այս քոլեջները բաց են միջնակարգ դպրոցը ավարտած բոլոր աշակերտների համար, նաև նրանց համար, ովքեր դրական գնահատական են ստացել Կալիֆոռնիայի Միջնակարգ Դպրոցի Ավարտական Քննության ժամանակ:
- Բաց են նաև 18 տարեկանից բարձր անձանց համար, ովքեր կարող են օգուտ քաղել դասերից:

ԾՐԱԳՐԵՐ

Ահա 3 գլխավոր ծրագրերը, որոնք հրամցվում են Կալիֆոռնիայի համայնքային քոլեջի կողմից.

1. Տեղափոխման ծրագիրը այն աշակերտների համար է, ովքեր ցանկանում են անցկացնել համալսարանի առաջին 2 տարին 4 տարով համալսարանում ուսումը շարունակելու համար: Միջնակարգ դպրոցում սովորելու տարիներին,

աշակերտները պետք է անցնեն այն դասերը, որոնց նրանց հարկավոր է 4 տարով համալսարան ընդունվելու համար, մինչև համայնքային քոլեջ ընդունվելը:
 Կալիֆոռնիայի պետական համալսարանի ավելի շատ ուսանողներ ուսման առաջին 2 տարին անցկացնում են համայնքային քոլեջում, քան թե համալսարանում:

2. Վկայականի ծրագիրը (The Certificate Program) այն ուսանողների համար է, ում հատուկ ուսուցում է հարկավոր մասնագիտական բնագավառում: Քանի որ ոչ բոլոր քոլեջներն ունեն բոլոր դասերը տվյալ մասնագիտությունը ստանալու համար, դուք պետք է կապվեք քոլեջի հետ այդ տեղեկությունը ստանալու համար: Այն ուսանողները, ովքեր կվերջացնեն մասնագիտական դասերը կստանան ավարտական վկայական (Certificate of Achievement):

Կալիֆոռնիայի Համայնքային Քոլեջի Մասնագիտական ծրագրերը

Գյուղատնտեսություն Բիզնես և ֆինանսներ	Բնապահպանական և բնագիտական գիտություն	Կառավարում և հսկողություն Գիտություն և
Հաղորդակցություն	Կադրերի Բաժին	Լաբարատոր աշխատանք
Քրեական արդարադատություն	Էկոնոմիկա և Սնունդ	Ծառայողական ոլորտ
Էլեկտրական /Էլեկտրոնիկա		Առևտուր և արդյունաբերություն
Ինժինեռական տեխնոլոգիա		

3. Ասոցիացված արվեստի աստիճանի (The Associate of Arts Degree) ծրագիրը այն ուսանողների համար է, ովքեր ցանկանում են ավարտել իրենց բարձրագույն ուսումը քոլեջի առաջին 2 տարիների ընթացքում: Համայնքային քոլեջում դասերը սկսելուց հետո, ուսանողները պետք է ծանոթանան այն պահանջների հետ, որոնք կհանգեցնեն Ասոցիացված արվեստի աստիճանի ձեռքբերմանը: Այս դասընթացները կպահանջեն քոլեջի նախապատրաստական դասեր, որոնք հրամցվել են միջնակարգ դպրոցում:

Կալիֆոռնիայի պետական համալսարանի (CSU) ցանց

Կալիֆոռնիայի պետական համալսարանի ցանցի դպրոցները գտնվում են 23 քաղաքներում, ունեն ավելի քան 325,000 ուսանող և հրամցում են ավելի քան 1,600 աստիճանների ծրագրեր: Ահա թե որտեղ են գտնվում դրանք. Բեյքրուֆիլդ, Չանել կղզիներ, Չիկո, Դոմինգես Հիլս, Իստ Բեյ, Ֆրեզնո, Ֆուլերտոն, Համբոլդ, Լոնգ Բիչ, Լոս Անջելես, Օռվային ակադեմիան, Սոնտերեյ Բեյ, Նորթրիջ, Քալ Պալի Պամոնա, Սաքրամենտո, Սան Բերնարդինո, Սան Դիեգո, Սան Ֆրանցիսկո, Սան Հոգե, Քալ Պալի Սան Լուիս Աբիսպո, Սան Մարկոս, Սոնոմա և Ստանիսլաուս: Կալիֆոռնիայի պետական համալսարանի ցանցի ընդունելության պահանջմունքները այնպիսին են, որ Կալիֆոռնիայի միջնակարգ դպրոցը ավարտող աշակերտների 33% ընդունվում են: Ընդունելությունը կախված է գնահատականների միջին թվաբանական (GPA) միավորի և SAT կամ ACT ընդունելության քննությունների արդյունքների գումարից:

Որպես օրենք, ինչքան GPA-ը բարձր լինի, այնքան քննության ցածր արդյունք կպանջվի և հակառակը: Հաջորդ տարվա աշնանը քոլեջ ընդունվելու համար, դիմումնագիրը պետք է լրացնել ավարտական դասարանի հոկտեմբերի 1-ից նոյեմբերի 30-ը ընկած ժամանակաշրջանում:

Կալիֆոռնիայի համալսարանը (UC) և Կալիֆոռնիայի պետական համալսարանը (CSU) համաձայնվածություն ունեն, որ ընդունելության նույն պահանջները ներկայացնեն առաջին կուրս ընդունվող աշակերտների համար, հնարավորություն տալով նրանց վերցնելու նույն դասընթացները 2 համալսարաններն ընդունվելու համար: CSU-ի ղեկավարները քվեարկել են, նվազեցնել պահանջվող ընտրովի դասընթացների քանակը 2 դասընթացով, փոխարինելով դրանք լաբարատոր գիտության 1 և 1 պատմության/հասարակագիտության լրացուցիչ տարվա դասընթացներով: Ահա համալսարանի 2 ցանցերի մի նիմում պահանջները. 4 տարվա անգլերեն լեզվի, 3 տարվա մաթեմատիկայի, 2 տարվա պատմության/հասարակագիտության, 2 տարվա լաբարատորիայի գիտության, 2 տարվա անգլերենից բացի մեկ այլ լեզվի, 1 տարվա տեսողական կամ կատարողական արվեստի և 1 տարվա ընտրովի դասընթացներ: Յուրաքանչյուր առարկայից պետք է ստանալ “C” (C) կամ ավելի բարձր գնահատական:

CSU-ի ընդունելության համար պահանջվող դասընթացների ցուցակը նշված է 8-9 էջերի վրա:

Պահանջվող քննությունները. բոլոր աշակերտները պետք է ներկայացնեն SAT, SAT առարկաների կամ ACT քննությունների արդյունքները:

Պահանջվող գնահատականները. 10-12 դասարանների գնահատականների GPA-ը (բացառությամբ ֆիզկուլտուրայի) SAT կամ ACT քննությունների արդյունքների հետ միասին որոշիչ դեր է խաղում ընդունելության ժամանակ: Այն բոլոր դասընթացները, որոնք պահանջվում են քոլեջ ընդունվելու համար, պետք է ստանալ գոնե “C” (C) կամ ավելի բարձր գնահատական: Գնահատականների միջին թվաբանական միավորը (GPA), Honors կամ Advanced դասերի գնահատականները ներառյալ, հաշվել կարող են դպրոցի խորհրդատուները: Առաջին կուրս ընդունվող աշակերտների գնահատականները այնքան բարձր պետք է լինեն, որ նրանք Կալիֆոռնիայի բոլոր միջնակարգ դպրոցները ավարտածների 1/3 մասի մեջ կարողանան մտնել:

Կալիֆոռնիայի համալսարան (UC)

Կալիֆոռնիայի համալսարանի շենքերը սփռված են 10 քաղաքներում. Բերկլի, Դեյվիս, Մըրսետ, Սան Ֆրանցիսկո, Սանտա Կրուզ, Սանտա Բարբարա, Լոս Անջելես, Ըովայն, Ռիվրսայդ և Սան Դիեգո: Ընդունվելու համար աշակերտները պետք է բավարարեն նշված բոլոր պահանջներին: UC ցանցը ընդունում է միջնակարգ դպրոցը ավարտածների միայն 1/8-րդ կամ 12.5% -ին: Հաջորդ տարվա աշնանը քոլեջ

ընդունվելու համար, դիմումնագիրը պետք է լրացնել ավարտական դասարանի նոյեմբերի 1-30-ը ընկած ժամանակաշրջանում:

Պահանջվող գնահատականները.

Այն բոլոր դասընթացները, որոնք պահանջվում են քուէջ ընդունվելու համար, պետք է ստանալ գոնե “C” (C) կամ ավելի բարձր գնահատական: Գնահատականների միջին թվաբանական միավորը (GPA), Honors կամ Advanced դասերի գնահատականները ներառյալ, հաշվել կարող են դպրոցի խորհրդատուները: GPA-ի և SAT կամ ACT քննությունների արդյունքների գումարը հիմք է հանդիսանում Կալիֆոռնիայի համալսարանի ցանց ընդունվելու համար, չնայած, անձնական հաստատականությունը և արտադասարանական միջոցառումները նույնիսկ կարևոր դեր են խաղում ընդունելության ժամանակ:

Դասընթացների մինիմում պահանջները.

Բոլոր այն դասընթացները, որոնք UC համալսարանի պանջմունքներին են բավարարում պետք է քուէջի նախապատրաստական դասընթաց լինի: (նայել 8-9 էջերի վրայի դասընթացների ցուցակին):

Պատմություն/հասարակագիտություն 2 տարի

Անգլերեն լեզու 4 տարի

Քուէջի մաթեմատիկայի նախապատրաստական դասընթաց, 3 տարի

խորհուրդ է տրվում 4 տարի

Լաբարատորիայի գիտություն պահանջվում է 2 տարի, 3 կամ 4 տարի խորհուրդ է տրվում

Օտար լեզու 2 տարի, 3 կամ 4 տարի խորհուրդ է տրվում

Տեսողական կամ կատարողական արվեստ 1 տարի

Համալսարանի կողմից ընդունված ընտրովի դաս, գոնե 2 ոլորտից.

4 տարվա առաջադեմ մաթեմատիկա; 3-րդ, 4-րդ կամ 5-րդ տարվա օտար լեզու, լաբարատորիայի գիտության, հասարակագիտության, տեսողական/կատարողական արվեստի լրացուցիչ տարի(ներ) (սահմանափակ)

* Լաբարատորիայի գիտության մեկ դաս կարելի է վերցնել 9-րդ դասարանում: Կենսաբանության և քիմիայի կամ ֆիզիկայի դասընթացները պարտադիր են:

Ընտրողականություն.

Քանի որ Կալիֆոռնիայի համալսարանները (UC) ունեն ավելի շատ դիմորդներ, քան ընդունելության տեղեր, դրա պատճառով, ընդունելության ժամանակ, նրանք հաշվի են առնում ընտրանին (ինչպիսի դասընթացներ են վերցրել) և խորությունը (քանի տարի են սովորել, քանի Honors և AP դասեր են անցել):

Քննությունների պահանջները.

Բոլոր ուսանողները պետք է ներկայացնեն SAT կամ ACT քննությունների արդյունքները: Նաև, խորհուրդ է տրվում աշակերտներին նախորոք ստուգելու և ներկայացնելու SAT առարկաների քննության արդյունքները քոլեջին:

Քննությունները պետք է հանձնել մինչև ավարտական դասարանի դեկտեմբեր ամիսը:

Քոլեջի նախապատրաստական դասընթացներ (այս դասընթացները բավարարում են UC “ա-է” և CSU պահանջները).

Ա. Պատմություն--2 տարի

Պետություն, Անցումային պետություն, AP պետություն, Honors պետություն, ծաղրական դատավարություն, AP Եվրոպայի պատմություն, ԱՄՆ-ի պատմություն, SDAIE ԱՄՆ-ի պատմություն, AP ԱՄՆ-ի պատմություն, աշխարհի պատմություն, SDAIE աշխարհի պատմություն, AP աշխարհի պատմություն

Բ. Անգլերեն լեզու--4 տարի

Անգլերեն լեզու 9-12, անցումային անգլերեն 9-12, Honors անգլերեն լեզու 9-10 Honors անգլերեն լեզու 11, AP անգլերեն գրականություն

Առաջադեմ անգլերեն լեզվի զարգացման դաս 3,4 (ամենաշատը 1 դաս այլ անգլերեն լեզվի դասի հետ միասին)

Քոլեջի նախապատրաստական անգլերեն լեզու

Գ. Մաթեմատիկա --3 տարի, խորհուրդ է տրվում 4 տարի (*կարող է միայն օգտագործվել “գ” պահանջի համար)

*հանրահաշիվ, *երկրաչափություն, *հանրահաշիվ 2, *եռանկյունաչափություն, նախա-բարձրագույն հանրահաշիվ (Pre-Calculus),

*SDAIE հանրահաշիվ, *SDAIE երկրաչափություն, *SDAIE հանրահաշիվ 2, AP բարձրագույն հանրահաշիվ AB, AP բարձրագույն հանրահաշիվ BC, AP վիճակագրություն

Դ. Լաբարատորիայի գիտություն—պահանջվում է 2 տարի, խորհուրդ է տրվում 3 տարի

Անատոմիա և ֆիզիոլոգիա

Կենսաբանություն, SDAIE կենսաբանություն, AP կենսաբանություն, Honors կենդանաբանություն, քիմիա, երկրագիտություն, Honors քիմիա, SDAIE քիմիա, AP քիմիա, ֆիզիկա, AP ֆիզիկա, միկրո/ծովային կենսաբանություն

Ե. Օտար լեզու --պահանջվում է 2 տարի, խորհուրդ է տրվում 3 տարի
ֆրանսերեն 1-3, AP ֆրանսերեն 4
իսպաներեն 1-3, AP իսպաներեն 4, AP իսպաներեն գրականություն 5
իսպաներեն իսպանախոսների համար 1-2
ամերիկյան նշանների լեզու (խուլ համրերի համար) 1-3

Զ. Տեսողական/կատարողական արվեստ — պահանջվում է 1 տարի
Առաջադեմ արվեստ, առաջադեմ արվեստ/պորտֆոլիոյով, առաջադեմ
լուսանկարչություն, AP ստուդիայի արվեստ, արվեստի պատմություն,
երաժշտության գնահատում, համույթ, ջազի համույթ, դաշտային
արվեստ, նվագախումբ, օդահունչ գործիքների խումբ, կամերային
երաժշտության երգչախումբ, ասմունք, խառը երգչախումբ,
երաժշտական արտադրություն, երաժշտական թատրոն, AP
երաժշտության թեորիա, լուսանկարչություն 1, լուսանկարչություն 2,
մուլտիպլիկացիա, արվեստի կառուցվածք 1, արվեստի կառուցվածք 2,
քանդակագործություն 1, պար 1, թվային արվեստ և տեսագրում,
դրամա 1, պար.

Ներկայացման բեմադրում (UC համալսարանի կողմից հաստատված
դասընթացների թարմացված ցուցակի հետ կարելի ծանոթանալ դպրոցի
խորհրդատուի միջոցով կամ էլ www.ucop.edu/doorways կայքից):

Է. Ընտրովի դասեր (ա-է բաժնում նշված բոլոր առարկաները, բացառությամբ
մաթեմատիկայի դասերի և ներքոհիշյալ դասընթացները). պատմություն -- “ա”
բաժնում նշված բոլոր առարկաները անգլերեն լեզու -- լրագրող, խոսելաձև,
բանավեճի դաս բարձրագույն մաթեմատիկա -- AP համակարգչային գիտություն
Ա, AP համակարգչային գիտություն AB, նախա- բարձրագույն հանրահաշիվ ,
բարձրագույն հանրահաշիվ, վիճակագրություն, համակարգչային գիտություն
լաբարատորական գիտություններ-- “դ” բաժնում նշված բոլոր առարկաները
օտար լեզու --“է” բաժնում նշված բոլոր առարկաները, (բացառությամբ առաջին
տարվա լեզվի դասից)

հասարակագիտություն --էկոնոմիկա, SDAIE էկոնոմիկա, Honors էկոնոմիկա,
AP էկոնոմիկա, հոգեբանություն, սոցիոլոգիա սպորտային բժշկություն
(ROP)

Նշում. Միայն ընդգծված դասընթացներն են, որ տալիս են ավելորդ առավելություն.
Ա=5, Բ=4, Գ=3 UC համալսարանի կողմից հաստատված բոլոր դասընթացների
ցուցակի համար հյուրընկալեք www.ucop.edu/doorways կայքը:

Ինչպե՞ս քոլեջ ընտրել:

Աշխարհագրություն. գտնվելու վայրը

Համալսարան ընտրելիս, ինչքան որ կարևոր է հաշվի առնել որակյալ կրթությունը, այնքան նաև կարևոր կարող է լինել, թե որտեղ է գտնվում համալսարանը: Որտե՞ղ էք ցանկանում սովորել: Արդյո՞ք կլոր տարին պայծառ արևը կարևոր դեր է խաղում ձեր հոգեկան առողջության համար, թե ձմեռը դահուկներով սահելու համար ավելի տարբեր եղանակ է հարկավոր: Միգուցե՞ դուք ցանկանում եք ձեր գրավոր աշխատանքները կատարել էֆեյյան աշտարակի ստվերի տակ, թե մնալ տանը: Քոլեջում սովորելը և կրթությունն է և փորձություն, դրա համար այնպիսի վայրում քոլեջ ընտրեք, որ բավարարի ձեր ընտրությանը:

Քոլեջի մթնոլորտը.

Քոլեջ ընտրելիս դուք պետք է հաշվի առնեք նաև քոլեջի շրջապատը և մթնոլորտը: Եթե դուք չեք կարող ապրել առանց գիշերային զվարճանքների, մտածեք քաղաքի մասին: Եթե սիրում եք բնության գրկում լինելը, մտածեք գյուղի մասին: Ամեն տեղ քոլեջներ կան, Մինեսոտա նահանգի փոքր քաղաքներից սկսած միջև Մանհեթան:

Եթե միշտ բնակվել եք արվարձաններում, ուրեմն քաղաքային քոլեջում սովորելը ձեզ համար կլինի արկածախնդրային: Բայց մի քանի շաբաթ հետո դուք կկարոտեք արդյո՞ք կանաչ դաշտավայրերը կամ բաց տարածությունը: Հակառակ դեպքում, եթե դուք սովոր եք խանութների և կինոթատրոնների աղմուկին և քոլեջ ընտրեք գյուղական տարածքում, ապա ամեն գիշեր դուք արդյո՞ք կցանկանաք գնալ ուսանողական կենտրոն աղմուկ, քաղաքի լույսեր տեսնելու և մարդկանց հետ շփվելու: Քոլեջի ուղեցույցի հետ ծանոթանալիս, մտածեք այդ մասին, թե որտեղ եք մեծացել և ինչքան են ուզում փոփոխել ձեր կյանքը:

Քոլեջի մեծությունը.

Մի մոռացեք, թե ինչ մեծության դպրոց եք ցանկանում հաճախել: Քոլեջները լինում են տարբեր մեծության. Կալիֆոռնիայի նահանգում դպրոց կա որտեղ միայն 26 ուսանող է արձանագրված, իսկ Փեն Ստեյթ համալսարանում՝ 30,000 կամ ավելի: Իսկ թե՞, որն է բոլորից լավը՝ կախված է ձեզնից:

- Մեծ թե՞ փոքր միջնակարգ դպրոց եք հաճախել:
- Քաղաքում թե՞ գյուղական տարածքում եք մեծացել:
- Սիրում եք այնպիսի տեղ լինել, որտեղ ձեզ բոլորն են ճանաչում, թե՞ անանուն մնալ ամբոխի մեջ:

Մեծ համալսարանները ունենում են մեծ տարածք մի քանի շենքով, ինչպես նաև ուսանողական ծառայությունների և զբաղմունքների առողջ համակարգ: Փոքր քոլեջները կարող են անձնական ուշադրություն դարձնել ձեզ վրա: Միգուցե դուք պետք է նաև մտածեք, թե ինչ հեռավորություն եք ուզում քայլել մեկ դասասենյակից

մյուսը գնալու համար: Այդ մանրուքները կարող են ազդել ձեր կայացրած որոշման վրա:

Տեսակը.

Ձեր դպրոցների ցուցակի տարբեր տեսակի դպրոցները հաճախ կարող են անտեսվել, երբ դուք նկատի եք առնում քոլեջի չափանիշները, բայց դուք պետք է նաև հաշվի առնեք, որ բոլոր քոլեջները և համալսարանները նույնը չեն:

- Ինչի՞ն են նրանք նվիրում իրենց ժամանակը և ռեսուրսները. հետազոտություն, թե՞ դասավանդում և ուսուցում:
- Արդյո՞ք նրանք մասնագիտացված են մեկ ոլորտում, թե՞ նրանք հայտնի են լայն կրթական ոլորտում:
- Միասեռ դպրոց է, թե՞ երկսեռ:
- Արդյո՞ք նրանք կրոնական պատկանելիություն ունեն:
- Պետական են, թե՞ մասնավոր:

Պատմականորեն գոյություն ունեն նաև սևամորթների քոլեջներ, իսպանախոսների հաստատություններ, երկսեռ դպրոցներ, երեկոյան կամ կես դրույքով ուսուցման դպրոցներ: Քոլեջի ուղեցույցը կարող է ձեզ ծանոթացնել այդ տեղեկության հետ: Ձեր հնարավորությունները անսահման են և ձեր անձնական կրթական սովորությունները, նախընտրությունները և առկա ռեսուրսները կարող են օգնել ձեզ գտնելու այնպիսի դպրոց, որտեղ դուք կարող եք հաջողության հասնել:

Արժեքը, կրթաթոշակ և ֆինանսական օգնություն

Քոլեջ փնտրելիս արժեքի մասին մտածում են բոլոր ծնողները: Քոլեջի և համալսարանի արժեքները տարբեր են և արժեքը կրճատելու շատ ձևեր կան: Դպրոցների մեծ մասը հրամցնում են ֆինանսական օգնություն, կրթաթոշակ, աշխատանքի ուսուցման ծրագրեր, ուսանողական վարկերի հետ մեկտեղ: Մտածեք, թե ինչպես կարող եք օգտագործել ձեր տաղանդը դասասենյակից դուրս: Դուք կարող եք անվճար սովորել, եթե կարող եք երգել կամ ֆուտբոլ խաղալ (կամ երկուսն էլ): Եթե ուսումը ամբողջովին անվճար չլինի, ապա կլինի մի մասը:

Պետական համալսարանները ուսուցման ավելի ցածր գներ ունեն նույն նահանգում ապրող աշակերտների համար, իսկ ուրիշ նահանգներից եկածների համար գները կարող են լինել այնքան բարձր, որքան մասնավոր համալսարաններում: Մասնավոր հաստատությունները նույն գներն ունեն բոլորի համար, բայց հաճախակի ունենում են մասնավոր հիմունքներով ստեղծված կրթաթոշակներ, այնպես որ կարելի է դիմել, նույնիսկ եթե գինը շատ բարձր է:

Դպրոցի ուսման վարձը այն գինը չէ, որ դուք վճարում եք, որովհետև դրա մեջ չի մտնում ֆինանսական օգնությունը կամ ավելորդ ծախսերը, ինչպիսիք են հանրակացարանի կամ գրքերի արժեքը: Բայց շատ կարևոր է, որ ստուգեք բոլոր ծախսերը քուէջ ընտրելիս: Այն կարող է լայնացնել կամ նեղացնել ձեր ընտրանին, կախված ձեր ֆինանսական վիճակից:

Ինչպե՞ս պատրաստվել համալսարան ընդունվելու համար

- Ընթերցեք ամեն օր ձեր բառապաշարը հարստացնելու համար
- Հյուրընկալեք տարբեր համալսարաններ կամ նրանց կայքերը մոտիկից ծանոթանալու նրանց հետ և հասկանալու թե ինչն է ձեզ հետաքրքրում
- Խոսել խորհրդատուի հետ քուէջների և համալսարանների վերաբերյալ
- Լավ սովորել և բարձր գնահատականներ ստանալ
- Եթե մաթեմատիկան լավ սերտեմ, կարող եմ համալսարանի մակարդակի դասեր վերցնել միջնակարգ դպրոցում, որը կփոխարինի համալսարանի դասին
- Ծանոթացեք տարբեր մասնագիտությունների հետ
- Խոսեք այն մարդկանց հետ, ում ընտրած մասնագիտությունը ձեզ դուր է գալիս և հարցրեք նրանց, թե որ դպրոցում են սովորել և ինչպես կարող եք դուք պատրաստվել
- Զբաղվել գրավոր աշխատանքով
- Ծանոթացեք Ա-է դասընթացների հետ
- Բարձր պահպանեք գնահատականների միջին թվաբանական միավորի արժեքը (GPA)
- Ինչքան կարող եք ավելի շատ զբաղվեք արտադասարանական աշխատանքով
- Սկսեք ռեզյումե գրել ձեր ստացած պարգևների, մասնակցած միջոցառումների, ակումբների և զբաղեցրած պաշտոնների վերաբերյալ
- Խոսեք ձեր հարազատների և ընտանիքի անդամների հետ, թե ինչպես կարող եք դրամ խնայել համալսարան ընդունվելու համար հիմնականից սկսած
- Ծանոթանալ FAFSA-ի հետ – պետական օգնություն
- Մասնակցեք դպրոցի կամ համայնքային կազմակերպությունների աշխատանքներին
- Հասկացեք, թե ինչ տարբերություն կա համայնքային քուէջի, պետական քուէջի և համալսարանների միջև



Քոլեջի և մասնագիտության ուսումնասիրություն Կալիֆոռնիայի նահանգի պետական քոլեջները և համալսարանները

Կալիֆոռնիայի համալսարան (UC). www.ucop.edu/pathways or /doorways

UC դպրոցների հասցեները. www.ucop.edu/pathways

Կալիֆոռնիայի պետական համալսարան (CSU): www.csumentor.edu

CS դպրոցների հասցեները. www.csumentor.edu

Համայնքային քոլեջներ (CC): www.cccco.edu CC

դպրոցների հասցեները. www.cccco.edu/find.htm

Քոլեջի պլանավորում և ֆինանսավորում.

www.YesICan.gov/secondary/planning/index.html (անգլերեն և իսպաներեն).

քոլեջների կրթական գրասենյակներ.

<https://bigfuture.collegeboard.org/findcolleges> studygs.net

www.cacareerzone.org calcareercenter.org whodoyouwant2be.com

khanacademy.org www.bridges.com. Համալսարանի և մասնագիտության

պլանավորման օգնություն ԲԴՄՇ-ի մինչև 12-րդ դասարանի

աշակերտների համար: Ստեղծել պորտֆոլիո օգտվելով կայքի ID

0105688 գաղտնագրից dastarr, օգտագործել դպրոցի ձեր մշտական գոծրի

համարը (permanent school id#): Քոլեջի վիրտուալ շրջայց վերցրեք.

<http://www.youvisit.com/colleges>

https://www.ted.com/playlists/86/talks_to_watch_with_kids

<http://home.myscholly.com/>

